



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

k-63

~~№ 382~~

18 NOV 2011

АНДРЕЙ БОЛЬШАКОВ
№ 1700
БИБЛИОТЕКА ЧУЖИХ

А. С. БОЛЬШАКОВ. 1-е издание
Цена к. ~~20~~ к., пер ~~06~~ к.
БИБЛИОТЕКА-ЧИТАЛЬНЯ

Handwritten notes in red ink, including the number 1700 and other illegible scribbles.

MCS VOL 81


Handwritten in red ink:
Շառլ
Գրքեր

Հ. Ա. ԵՐԵՄԵԱՆ



ԱՆԷԾԻՔ

Handwritten in blue ink:
տա՛ւ. / Ե. Զ. Զ. Զ.



ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1903

08.04.2013

ԱՆԷՄՔ

891.99


Ե-63

ԱՐ Հ. Ս. ԵՐԵՄ.

ԱՆԷԾՔ

ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՄԻԿ ԱՄԱՐՈՒՄ



Վ. ԵՆԿՏԵԿ

Ի ՍՈՒՐԲ ԳԱՋԱՌ

1903

28713

Ա Ն Ձ Ի Ն Ք

ԱՐՏԱԻԱԶԴ

ԿԱՊԱՐՃԱԿԻՐՆԵՐ

ԱՆԱՀԻՏ

ՊԱՐԵՐԳՈՒՆԵՐ

ԱՐՏԱԵԼՍ

ՈԳԻՆԵՐ

ՄՈԳՊԵՏ

ՔՈՒՐՄԵՐ

ՆԱԶԵՆԻԿ

ԳՈՒԺԿԱՆ




6268
41

Ա Ն Է Ծ Ք

“ Դու յորս հեծցին յԱզատ ի վեր ի Մասիս
Զքեզ կայցին քաբբ. տարցին յԱզատ ի վեր ի Մասիս.
Անդ կացցես, եւ զոյս մի՛ տեսցես .”

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԻԶԲ

ԱԶԳԱՅԻՆ ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾ



Մասեաց վրայ հովիտ մը, ուր կը տեսնուէ Անահտայ
նուիրուած փրկիկած մեհեան մը, գարբարուած զիցա-
մօր մամռապատ մարմարինն արձանով, որուն խարսխին
վրայ Արտաւազդ գլուխը գրած կ'երագէ: Իր երկու կա-
պարճակիրները աչուընին կը սեւեռեն քարայրին կոնակը
եղած կամարակալ դռներէն դուրս, կը դեռեն քուր-
մերուն և քրմուհիներուն առաւօտեան կրօնական պա-
րերը: Արշալոյս է. քարայրի գմբէթէն կը վազէ ինքնա-
բուխ ջրոյ սահանք մը, որ մեհեանին քովնուի խոռու-
ներէն ընդունած արշալուսային մեղմ ճառագայթներով
կը շողայ բազմագունի: Փարայրին առջեւ կը տեսնուի
սրբազան դաշտը, որ շրջապատուած է բարձրահասակ

բարտխներով, եղեւիններով և նոսճիներով. ամբողջ ընդարձակ մարդագետինը ծաղկած է և կը տեսնուի ուռնացած գեղեցիկ կանաչութիւն մը, ուր կ'արածին Անահայայ նուիրական նոխազները: Գաշտին աջակողմը հինգ լալկան ուռնիներու ստուերին տակ վիշապաձեւ աղբիւրէ մը կը բղխի ջուր՝ ու խոյերու գլխով քանդակուած աւազանին մէջ կը լեցուի. անկից Արտաւազալայ ձին ջուր կը խմէ: Սրբազան դաշտին առջեւէն կ'երկարի մացառապատ ուղի մը. հոն են Արտաւազգի որսական շները, ու կը հսկեն իրենց տիրոջ վրայ: Քրմական խմբին պարերգը կը սկսի: Արտաւազը շարթննար. կապարճակիրները ուշադրութեամբ մտիկ կ'ընեն պարերգին:

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՊԱՐ

Գորգ սսկեշող սսկի գորգ,
Քեզ արշալոյս փրոննք գորգ.
Կազմենք աթոռ պրեզով,
Արի բազմէ Անահիտ՝
Պըսակ Հայոց աշխարհիս:
Ծաւի մեղուշ աչերուդ
Քաշէ ցողը արծաթիկ,
Ծաղկանց շնչէ՛ անուշ շունչ.
Ծաղիկներէն շրնչէ՛ շունչ:

ԵՐԿՐՈՐԳ ՊԱՐ

Ձեփիւռ փըչէ սսկեհեր
Մօր Անահայայ մագերուն.

Անոյշ փըչէ այտերուն.
Ոսկի շըպար ու համբոյր՝
Տուր Անահայայ այտերուն:

Կապարճակիրները այդ երգերէն յափշտակուած կ'երեւին, և իրենց արքայն մեհեանին մէջ թողլով, քրմական պարերգու խմբին կը դիմեն: Սրբազան պարերգը ներդաշնակօրէն կը շարունակուի:

Ա. Պ Ա Ր

Աստղեր ամէն, Անահիտ,
Համբոյր տուին այտերուդ.
Գեղը սիրուն գեղանի
Շարժէ նախանձը լուսնի.
Լուսին եղաւ գալիկահար,
Դու լուսավառ հըրավառ:

Բ. Պ Ա Ր

Կուսանք հայոց
Կըտրիճ որդիք,
Հէզ գիւղացիք,
Իշխանազունք՝
Աշխարհ ամէն
Մայր Անահիտ,
Արարատեան
Աշխարհ ամէն

Քեզի նուէր
Բերէ արիւն:

Գաշտին առջեւէն կ'անցնին տաւարի խումբը, Տեր հովիւ մը իր միջնասակ աղջիկով կ'առաջնորդէ տաւարը: Անուշադիր պարերգին՝ կ'անցնին անոնք, աղջիկը հովուական սրինգը կը սուլէ. հայրը զբաղած է տաւարին առաջնորդութեան: Մեհենապետ Մոզպետը դռնէ մը տաճարին մէջ մտնելով, Արտաւազգին կ'ուզէ իր օրօրանուագ երգը.

Մ Ո Գ Պ Ե Տ

Նընջէ արքայ, նինջ երկնային,
Ողիք, ճիւղաղք, Վիշապք, Գլբոզք՝
Թող հալածուին Պարիկներէն.
Յաւէրժարսունք, հարսունք կուսանք
Ուրախ երազ հիւսնն մրաքիւղ,
Խաղաղ անուրջ չըքնաղ պատկեր
Թող պարգեւեն մըաքիւղ օրօր,
Հեշտին օրօր մայր գիցանոյշ
Թող պարգեւէ օրօր անոյշ:

Մեհենին մութ կամարներէն կը լսուի սերերգու փոքրեկ ոգիներու երաժշտական պարերգի ձայնը —
հետուէն:

Ո Գ Ի Ն Ե Բ

Խաւարին մէջ
Լուսնակին մէջ
Ստաղբուրն մէջ
Հոգիներ ենք
Թըթուունք արթունք:
Թըռիչ ունինք
Ունինք սըլաք,
Սըրաեր խոցենք
Հոգի վառենք
Եւ սէր սըփոնք:

Մ Ո Գ Պ Ե Տ

Արարատեան վեհապետ՝
Մէջ մեհենին տաճարիս
Պաղատագին՝ կ'աղերսէ,
Սէր սիրական ոչ խընդրէ.
Աղերս խընդիրք իր միակ
Է որսալ որս անհամար:
Ողիք երգեն արքային
Արաւազալայ քաջութիւն:

Խնկարկու երիտասարդ երկու բուրձ Մնահտայ արձանին երկու կողմը կը դնեն խնկանուէր նիւթերով արձարձարձած խնկարաններ: Տաճարը կնդրուկներու բուրմներով կը լեցուի, և Արտաւազգի թմբութիւնը կը

սաստկանայ: Անտեսանելի սիրարան ոգիները կը շարունակեն իրենց երգը:

Ո Գ Ի Ն Ե Ր

Մասեաց խորշերէն օղը խոնաւուս
Թող տեղի տայ.

Մուծ վըհերէն թող տեղի տայ օղը մըռուս:

Շընչէ փըչէ

Ձեփիւս ձերմակ

Ոսկի ծիրան:

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ

Լուսին, դեռ չի մեռած
Կապկըպէ իմ որսերս.

Լուսնահար թող իյնան,
Նետահար թաւալին

Անգղ, արծիւ, բազէներ,
Երէներ և կիւնձեր:

Ո Գ Ի Ն Ե Ր

Գիշերային ըստուերներ, բաժնըւեցէք լուս-

(նի գըրկէն,

Ահա սարեր, վիհք, անդունդք, մարդ ու ան-

(տառ և օգ մեղմիկ

Կ'առնեն շրպար արեւէն, արեգ բաշխէ ներկ
(ոսկեշող:

Ըստուերներ, ձեր հառահներ ցօղեցէք մար-

(գարտաշար,

Շարեցէք ոսկեշար՝ ծաղկանց վըրայ ցօղ
(մարգարիտ:

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ

Դոփէ ձերմակս արադավազ,

Ճախրէ թըսիր արազ արազ,

Նեախս ամէն լեռներ ձորեր

Թող հասցընեն բիւր երէներ:

Եւ դու արեւ հըրձուէ վերէն,

Երբ իմ նետեր քեզ զոհ բերեն.

Արեւ հըրձուէ վերէն, օրհնէ

Նիզակս երբ քեզ հասնի հառաչ

Լալկան խըրխիջ իմ որսերուս:

Ո Գ Ի Ն Ե Ր

Թեթեւ թըսիչ

Թիթոան թուեր

Ունինք ամէն

Ոգէք թըթոունք:

Արի արքայդ

Յանձնէ հոգիդ,

Մըտիր պարէ
 Մեր պարին մէջ.
 Հրճուանք պչրանք,
 Թագ յաղթանակ,
 Բանակ, ջոկատ,
 Կագաւ, նաժիշտ,
 Հարճ սիրական՝
 Մարին կ'անցնին.
 Մեր սէր վառվառ
 Սըրտիդ մէջ բոց
 Կայծեր բոցեր
 Վառէ վառվառ.
 Մեր պարին մէջ
 Հոգիկ խաղաղ՝
 Պիտի գըտնէ
 Սէր ու կըրակ:
 Քեզ սիրական
 Կեանք լուսեղէն
 Փառք ենք անշէջ
 Տենչալի տենչ:

Ա. Բ. Տ. Ա. Ի. Ա. Զ. Դ.

Տենչայ սէր իմ
 Չեզ տենչալի.
 Փարի հոգիս՝
 Չեզ փարելի:

Շուրջ ճերմակիս
 Շարուեցէք. երգ
 Մեզմ, խանդակաթ
 Երգեցէք երգ:
 Քաղցր երգերով
 Պարեցէք. սէր,
 Սիրերգ, սրինգով
 Սէր սուլեցէք:

Ո. Գ. Ի. Ն. Ե. Բ.

Ճախրէ ճերմակ
 Պարէ թըտիր
 Սարերն ի վեր.
 Արի արքայն
 Առ բարձրացիր:
 Ծերուկ սարեր
 Ահա արքայն
 Գայ Արաւազդ.
 Ճերմակ գորգեր
 Տարածեցէք,
 Սըրտի լարով
 Երգ հիւսեցէք:
 Անդունդներէն
 Ու ամպերէն՝
 Ուրհիք, հրեշտակք
 Օն դուրս ելէք,

Ողջոյն արւէք
 Պար բոնեցէք,
 Քաջ Արքային
 Արտաւազգայ.
 Ահա արքայն
 Գայ ինքն արքայն,
 Ողջոյն արւէք
 Սարեր վըհեր
 Պարերդ, սիրերդ
 Հնչեցուցէք:

Մ Ո Ք Պ Ե Տ

Լացաւ լաց մեծ Արտաշէս,
 Խոցուած սրտով շատ լացաւ.
 Հոգին հանպարտ իր հոգին,
 Այլ եւս չմնաց երջանիկ.
 Որդին մերժեց իր հօր գութ,
 Անգութ որդին կաթողին
 Իր հօր մերժեց սէրն ու գութ.
 Վըրէժ երկինք և անգունդք
 Վըրէժ սարեր ունացին.
 Մընաց որդին քարասիրտ
 Մընաց դարձեալ հայրատեաց:
 Կաքաւ պարերդ և հրապոյր
 Զորդին անգութ դիւթեցին,
 Գոցեց ահանջ չի լըսեց

6268
14

Մերժեց իր հօր աղերսներ.
 Պատրոզ պարով պաշարուած
 Յառաջ վարեց իր ճերմակ:
 Լարեց կապարճ արձակեց
 Նեղեր գլխին որսերուն:
 Ուրախ զըւարթ Արտաւազդ
 Բըննեց հազար երէներ:
 Կու լար սրտով Արտաշէս
 Կու լար զորդին Արտաւազդ,
 Ի խոր խոցուած կ'արտասուէր,
 Հայոց աթոռ կու տեսներ
 Փըլած, անտէր, անպատիր:

Ո Ք Ի Ն Ե Ր

Ահա մնած մեր արքայն.
 Գայ առ որդին Արտաւազդ.
 Ահա կու դայ պատուիրե՛լ.
 Պատուէր ունի հայրական:
 Քանի չըքնազ է իր դեզ
 Քանի քընքուշ և անուշ:

Մեհեանին յատակէն գլուխ մը կ'երեւի, հերարձակ,
 ոսկեկուռ թագով, ուսերուն վրայ կարմիր ճիրանի մը
 ոսկի աստղներով հիւսուած. դամբանին շրջ կողմէն
 վեր կը ճառագայթէ փայլահայտ փայլուն լոյսը,
 որուն մէջ կ'երեւի Արտաշէս մինչեւ ուսը: Կը մեկնի
 Մոզպետ: Մեհեանին մէջ կը տարածուի խուլ ազմուշ

Ա. Ե. Ծ. Ք:



Վը, կը լսուի ճնճղաներու որոտացող թրթռուն ար-
ձագանգը: Արտաւազդ կ'արթնայ, հօրը ստուերէն ու
մեհեանին խորհրդական տեսարանէն շուարած, կ'ուզէ
խոյս տալ. և կ'աղաղակէ ահաբեկ:

Ա Ր Տ Ա Ի Ա Չ Դ

Հեռացիք
Ողիններ,
Հեռացիք
Արտաշէս
Յընդէ մէջ,
Լուս ծընծղայ:

Ա Ր Տ Ա Ի Ա Չ Դ

Հեռացիք
Ողիններ:
Հեռացիք
Արտաշէս:
Յընդէ մէջ
Լուս ծընծղայ,
Լուս տաճար:
Ողիններ
Թողէք զիս,
Տարտարոս
Կըլէ տար
ՉԱրտաշէս:

Ա Ր Տ Ա Շ Է Ս

Քաջ ազատ,
Քաջազարմ
Քաջ որդեակի
Գըրկէ զիս
Փարիմ բեզ
Հարազատ.
Արի եկ
Լուր քո հէջ
Հօր, որդեակ
Քո հէջ հօր.
Արտաւազդ,
Լուր որդեակ:

Ո Գ Ի Ն Ե Ր

Որդին ատէ, հայր սիրէ.
Որդին փախչի հայր գըրկէ.
Արտաւազդ անիծէ,
Արտաշէս օրհնեցէ:
Դուք վեհապետք,
Յազատն ի վեր,
Մասիսն ի վեր
Թըրէք յազատ
Ի վեր Մասիս:
Զաշխարհ հայոց
Դիտեցէք,
Դաշտեր հայոց
Օրհնեցէք:

Ա Ր Տ Ա Շ Է Ս

Սէր սիրականք՝ Անահիտ,
Ըզձեզ ծընաւ սիրական.
Հայոց թագին հովանի՝
Դիցանոյշ մայրն Անահիտ.
Ըզձեզ սիրուն հըրեշտակք
Տըւաւ հայոց աշխարհին:
Արիք հըրեշտակք
Թըրէք հատէք,
Սու հողիններ,

Որդւոյս զլիւն
 Հալածեցէք :
 Թող Արտաւազդ
 Լըսէ իր հօր .
 Աւանդ ունիմ
 Որդւոյս տալիք
 Պատուէրներ շատ
 Աղերս բարի :

Ա. Բ. Տ. Ա. Ի. Ա. Զ. Դ.

Պաշարուած եմ քաջերէն
 Շըւարած եմ մսլորուած .
 Անուրջներ սեւ արխրազին
 Քըսեցին մուր իմ զըլիւն :

Ա. Բ. Տ. Ա. Շ. Է. Ս.

Համբոյր մը տաք ճակատից որդեակ՝
 Թէ տայ շրթունքս, արիւնդ իմ սէր
 Սեւ մուր ջընջի ճակատէզ որդեակ,
 Հօր քո համբոյր ջնջէ սեւ մուր :

Ա. Բ. Տ. Ա. Ի. Ա. Զ. Դ.

Կը մերժեմ սէր հայրական
 Գորովազին թէ կաթողին .

Կը մերժեմ սէրդ Արտաշէս .
 Չունիմ հայր, հող ապիկար .
 Արամազդ ամպրոտածին
 Ծնաւ զիս . աստուածային
 Էս ծընունդ եմ զիւցական .
 Արտաշէս կարկի քո ձայն :

Ա. Բ. Տ. Ա. Շ. Է. Ս.

Արտաւազդ որդեակ,
 Սաթենիկ է քո մայր,
 Արտաշէս է քո հայր,
 Աըշակունի ես ծընունդ :

Ո. Գ. Ի. Ն. Ե. Բ.

Մեռնի սիրով հայր
 Իր որդւոյն համար .
 Որդին սիրուն թող սիրէ
 Իր հայր սիրէ սիրական :

Ա. Բ. Տ. Ա. Ի. Ա. Զ. Դ.

Թող Արտաշէս նընջէ,
 Խոր քուն, անհունին մէջ
 Թող նընջէ . մեռնի իր ձայն :

Ա Ր Տ Ա Շ Է Ս

Քեզ խօսք չէ հընչէ ձայնիս նըւագ՝
 Աւագ որդիս իմն Արտաւազգ.
 Աստուածային Անահիտ,
 Աստուածուհին կակուզ սիրտ
 Քեզ կակուզ սիրտ պարզեւէ՛:
 Պարզեւ ըլլաս Հայոց թաղին
 Պատիւ ու փառք Արշակունի:

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ

Չայնրդ մեռնի ինձ չի հասած,
 Կըլլէ խօսքերդ տարտարոս:

Ո Գ Ի Ն Ե Ր

Վաշ Արտաւազգ, վաշ քեզ արքայ,
 Գըրող՝ գիտցիր, գըրէ ըզքեզ
 Մեղապարտ. մընան մեղքերդ
 Անաղարտ: Ոգիներու
 Սիրուն արքայ, սիրէ զարքայն
 ՉԱրտաշէս մեծ սիրէ քո հայր:

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ

Ոգի Գըրող, տարտարոս
 Երազ, երազ են նանիր,

Երազ է կեանք ու հըրճուանք.
 Երազ են թագ, վայելք, փառք:
 Ծնունդք անմիտ երկիւղի
 Են ոգի զիք, տարտարոս:

Մեհեանէն ներս կը խուժեն քուրմեր և քրմուհիներ:
 Խնկամաններու կրակը կ'արծարծի. եղջիւրներու փողե-
 բու, բոժոժներու ու ճնճղաներու ձայնին հետ կը լսուին
 Անահտայ գորովագին յորգորները: Չայնը կու գայ ար-
 ձանին բերնէն:

Ա Ն Ա Հ Ի Տ

Վըրազ որդի՛
 Թող հովանիս
 Թող տարածեմ՝
 Աստուածային
 Իմ հովանիս,
 Որ Գըրողը
 Բան չի ըսէ
 Ու չի գըրէ
 Մեղքդ անիծած:

Ա Ր Տ Ա Շ Է Ս

Ըլսէ որդեակի՛
 Ոսկեծղղին
 Մայր Անահիտ
 Է հովանիդ:

ԱՐՏԱԻԱԶԴ

Մերժեմ ամէն հովանի
 Եւ քու թողած թաղ ժանդոս.
 Թողում լըքեալ արքունիք,
 Փարիմ նետիս. ըսփոփանք
 Որսորդութիւնն է միակ:
 Աշխարհ հայոց քեզ լացաւ
 Դիակից հետ փոսն ինկաւ:
 «Մինչ դու դնացեր, և զերկիրս ամենայն
 (ընդ քեզ տարար

Ես աւերակացս սրբէս թաղաւորեմ»:
 Աճիւն մարմինդ աւերակ
 Փըլած գահուն թող տիրէ:
 Ես ձի հեծած կը ձախրեմ
 ՅԱզատ ի վեր ի Մասիս
 Ճախրեմ կըտրեմ գաշա ու մարդ
 Տիրեմ գաշաց, անտառաց:
 Աստուածային հովանի
 Ես մերժեցի ի վաղուց,
 Խիզախութիւնս քաջութիւնս
 Զըրահ սրտիս հագցուցի:
 Հեռի ինձմէ Անահիտ
 Հեռի ամէն երկնային
 Հեռի անկոչ ուրուականդ.
 Քարանձաւն է իմ պալատ
 Շունք որսականք նախարարք . . .

ՔՈՒՐՄԵՐՈՒ ԽՈՒՄԲԸ

Շանթ հըրկիզող
 Իջնէ թափի
 Աստուածներու
 Բերնէն թափի:
 Արտաւազդի
 Տաղէ մարմին:
 Անիծէ ով մայր,
 Անէծք հազար
 Տուր Անահիտ,
 Արտաւազդին
 Լափէ հողին:

Քուրմերը մուկին՝ առանց սպասելու Անահիտայ պատգամներուն, կը դիմեն սուրբի և նիզակներու. մեհեանին մէջ խոտութիւն մը կը տիրէ: Արտաւազդ, նախատելով, արհամարհելով աստուածային հովանին, նախատելով Արշակունի թագը և սիրելի արքայն զԱրտաշէս, քուրմերը զայրացած ձիւ, աղաղակ կը տարածեն մեհեանին խոտչներուն մէջ: Մոգպետը կ'անպարէ, կ'ուզէ խաղաղեցնել քրմականներու զայրոյթը: Դիցուհւոյն արձանին մօտեւալով կ'որոտայ:

Մ Ո Վ Պ Ե Տ

Վրէժ երկինք,
 Վրէժ երկիր,
 Թող կարգայ.

Անահիտ
Վրէժ կարգա,
Անահիտ:

Արտաւազդ չորս կողմ նայելով, կ'ուզէ օգնութեան
կանչել իր կապարճակիրները, սակայն անոնք վտանգը
տեսնելով, մեհեանին ետեւի դռներէն խոյս կու տան:
Քրմականաց զայրոյթը Արտաւազդը կը վախցընէ.
սա կը պատրաստուի որ փախչի: Արտաշէս կը բռնէ
իր սրբւոյն ծիրանիէն, և կ'ըսէ.

Ա Ր Տ Ա Շ Է Ս

Կաց մի հեռանար զաւակ ամբարիշտ,
Ռիշա մընացիր միշա գութիս հայրական,
Յոյց չի արւիր գութ, գութ սրղիական:
Սէգ վայրագութիւնը ծրծեց և իմ
Ամէն գորով, գութ, սրտէս. ահա վրէժ
Երկինք երկիր վրէժ կ'որոտան զըլխիդ:

Արտաւազդ կը փորձէ ճողոզրել, ազատել, սակայն
հայրը թող չի տար. կը շարունակէ խօսքերը:

Կաց. ըսպառեցաւ, հատաւ սրբախ գութ.
Անէժք հայրական, անէժք բեղ որդի
Այլ կ'ըլլայ վերջին աւանդս անխընայ:
Անդութ, անխընայ կ'անիծեմ ըզբեզ
Արտաւազդ որդի ժրպհրեցար ժրպիրհ,
Վըստահ նիզակիդ, վըստահ կորովիդ,
Այլըն նախատինք կուտեցիր զըլխիս:

Թէ սիրա հայրական զըլթայ ու ներէ,
Այլ դիք, դիցուհիք, երկնից աստուածներ
Վրէժինդիր կ'ըլլան, վրիժառու մընան:

Ք Ր Մ Ա Կ Ա Ն Ք

Վրէժ երկինք
Վրէժ երկիր
Վրէժ սղիք,
Եւ որդիք
Անահտայ,
Վրէժ ամէն
Քրմականք
Գոչենք վրէժ:

Արձանին բերնէն կը լսուի Անահտայ պատգամը:

Ա Ն Ա Հ Ի Տ

Նախանձախընդիր ակումբը բըրմականք,
Նախատինք, որսորդ շոշորդ արքային
Զայրոյթ ահաւոր կուտեց մեր զըլխին:
Անհաշա աստուածներ անէժք կը գոսանք
Անէժք կը կարդանք կը գոսանք վերէն:
Թող հայրն իր որդին զորդին Արտաւազդ
Թող անիծէ հայրն իր որդին անասա:
Անէժք Արտաշէս թող կարդայ որդւոյն:
Պատիժ ահաւոր կազմած են քաջեր.

Տարտարոսին մէջ ոչ մէջ տաճարիս
Կ'ուզեմ վրէժխնդիր ըլլալ արխմարին:
Թողուցէք ձեր զէնք, քաշեցէք ձեր ձեռք
Արտաշէս որդւոյն կը կարդայ անէծք:

Քուրմերը կը հպատակին Անահտայ պատգամին. կը
նետեն զէնքերը, ձեռքերնին մէջքերնին դրած կը սպա-
սեն Արտաշէսի խօսքերուն: Արտաւազդ շունչ կ'առնէ
տեսնելով քրմականներու խաղաղական գիւրքը: Անահ-
տայ խօսքերը շեն վախցընէր. քուրմերու կատաղու-
թիւնը մտաւուտ վրէժխնդրութիւնը զինքը սարսե-
ցուցած էին. բայց տեսնելով որ Անահիտ թոյլ չի տար
որ անոնք զէնք վերցնեն, ինքը դարձեալ իր վայրա-
գութեան կը վերադառնայ: Դարձեալ խիզախօրէն կը
խօսի:

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ

Ապագան ինձ համար,
Աստուածներ անհամար,
Չեղի պէս է խաւար:
Կը ցընդի այն ինչպէս
Ոգիներ, ճիւղներ,
Հանդերձեալ պատիժներ
Կուտեցէք իմ զըլխիս:
Արտաշէս ուրուական
Իր բերան թող բանայ,
Հընազանդ Անահտայ
Թող մընայ. անխընայ

Անիծէ զԱրտաւազդ.
Իմ զըլխին Արտաշէս
Թող անէծք որտայ . . .

Քրմականք դարձեալ կը վրդովին, կը մռնչեն, բռունցքե-
ներ կը ցուցնեն, զէնքերու շեն գիւրք. կը յարգեն աս-
տուածային անահտական պատուէրը: Զայրացած աչքով
կը գիտեն զԱրտաշէս և կ'ուզեն լսել անոր անէծքները:
Եւ չի զսպելով բարկութիւննին կ'աղաղակեն:

Ք Ր Մ Ա Կ Ա Ն Ք

Փութմա՛ Արտաշէս,
Անէծք հրկիզող
Ժըպիրհ շոշորդին
Թափէ օն զըլխին:
Բաւ է նախատինք . . .
Բաւ է այլքան գութ:
Անէծք կը խընդրեն
Վրէժ կը կարգան
Երկին և երկիր:

Ա Ն Ա Հ Ի Տ

Մըտիր Ուրուական,
Ծիրմիդ մէջ մըտիր,
Անէծք շանթաճիդ
Նետէ հէզ որդւոյդ.

Դարձիր Արտաշէս
 Ի գաշա Ելիսեան.
 Պարիկ և կուսանք
 Վայելք և հրրճուանք
 Են քեզ ըստփոփանք.
 Ունայն է աշխարհս
 Եւ յոյս հողեղէն
 Պատրանք է նանիր.
 Գըթալ անգութին,
 Է զուս ապշութիւն:
 Արի Արտաշէս
 Թափէ անէծքներ
 Որպիկ վատշլէր
 Գրկեն Շուռաներ...

Ուրուականին շորս կողմը դեռ աւելի լոյս ճառագայ-
 թելով, կը տեսնուի անոր հեռանալը, քուրճերը կը
 խոնուին խոռոչին վրայ՝ ուր կը խորատուզուի ուրուա-
 կանը, էտեւէն կը գոռան.

Ք Ր Մ Ա Կ Ա Ն Ք

Լըսէ Արտաշէս
 Անէծք կը խնդրեն,
 Երկիրք և երկիր
 Վըրէժ կը գոռան:

Ուրուականը շերեւիտ, բայց անոր փոսէն կը լսուի:

Ա Ր Տ Ա Շ Է Ս

Ըստիպէ երկին,
 Ըստիպէ երկիր
 Անիծել ըզքեզ
 Արտաւազդ որդի.
 Ահաւոր անէծք
 Բերնէս կը թըռչին:
 Թող հանդչին աստուածք
 Եւ սպրբեր քըրմաց ...
 Կ'անիծեմ ... զորդիս:
 Հայրական անէծք
 Կը կարգամ գըլխիկ,
 Արտաւազդ անասաս,
 Ինձ յայանեն աստուածք.

«Դու յորս հեծցիս յԱզատ ի վեր ի Մասիս,
 Զքեզ կալցին քաջք, տարցին յԱզատ ի վեր
 (ի Մասիս.

Անդ կացցես, և զլոյս մի տեսցես):»

Ք Ր Մ Ա Կ Ա Ն Ք

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ

Դու յորս հեծցիս	Հեծնի Արտաւազդ
Զքեզ կալցին քաջք	Հեծնի իր ճերմակ
Ի տարտարոս	Քաջեր կը բընէ
Զքեզ կալցին քաջք:	Քաջեր հալածէ:

Արտաւազդ կը վազէ մեհեանէն դուրս և ճի հեծնելով կը ճախրէ, անփոյթ անտարբեր դէմք մը կ'առնէ, կարեւորութիւն չի տար անէծքին: Քրմականք կամարակապներէն կը հեռանան. տաճարին մէջ կը մնայ մոռցկեալ գետնամած. և Արտաւազդդայ վաղեմի սիրուհին քրմանոյշ Նազենիկը Անահտայ ատրուշանները արծաթեւու զբաղած կը մըմնջէ:

Ն Ա Զ Ե Ն Ի Կ

Եպերելի և ահաւոր դատաւրճիւ
կարգաց երկին, բըրնադաանց ըզհայր՝ անէծք
կարդալ անմեղ որդւոյն գըլխին: Զարքայն
(հայոց
Իմս Արտաւազդ կուսանք հայոց թող լան
(յաւէրժ:

Մ Ո Գ Պ Ե Տ

Տարտարոսի չար ոգիներ
Կ'ուզեն ըզքեղ մոլորցընել:
Կոյս քըրմանոյշ ինչո՞ւ այլբան
Խիզախ, ըմբոս, անաստ մըտքով
Դատես երկին և աստուածներ:
Դատակընիք, պատիժ, անէծք
Ինչ որ վըճուեն երկինք և զիք
Անքըննելի են Նազենիկ:

Ն Ա Զ Ե Ն Ի Կ

Ոչ չար ոգիք ոչ տարտարոս զիս կը մըլզն
Դատել երկին. արդարութիւն և իրաւունք
կը բողոքեն ընդդէմ նանիր կեղծ ու պատիր
վըէժխընդրութեան: Թէ Անահիտ գըլթած
(էր մայր

Պէտք էր գըլթար, կակուղ սիրտ տար Ար-
(տաւազդին.

Ամենակալ զիք զիցուհիք, թէ չեն սիրեր
Չարն ու յոսին, զիմադրեն որ հոն չի գըրին
Իրենց սիրած պատըսպարած ամէն հոգիք:
Մոգպես բարի զու բարեմիտ մեհենապետ.
Թէ հս կարող, ըսէ արդ ինձ. նանիր խըտիր
Ինչո՞ւ դընեն և աստուածներ. է՞ր Արտաւազդ
Թողուն գըրել և Արտաշէս սիրեն գըզուեն:
Թէ Արտաշէս սիրեց, պատուեց ամէն աս-
(տուած,

Բարի աստուածք չէի՞ն կարող բարի հոգի
Տալ արքային Արտաւազդայ: Կարող էին...

Մ Ո Գ Պ Ե Տ

Կարկէ լըռէ. զիտցիր որ զիք
Չեն խընայեր շանթերու տակ.
Թէ կոյս անուշ, թէ քըրմանոյշ
Կայրեն մըրկեն կորսընցընեն:

Դիք ամենայն են յլե՛ծինդիր
 Իրենց պատուոյն, իրենց կամքին :
 Մենք հոգեղէն ըստրուկ գլուխներ
 Երկնից գաղանիք պէտք չենք քննել :

Ն Ա Ջ Ե Ն Ի Կ

Ես տաճարիս արքունական
 Եմ բըրմանոյշ : Մոզպետ բարի
 Սաստով տաղես, սիրտըս տաղես .
 Փախուստ կու տաս : Կըրօնքի գաս
 Տըւեր են ինձ մոզ հընդիկներ :
 Աստուածներու սաստ պատուհաս
 Շատ ծանօթ է վաղուց ծանօթ :
 Իմ հարցերուս թէ ես կարող
 Տալ պատասխան, որո՞շ մեկնէ
 Պարզէ կըտոց բարի ու չար
 Պատգամներուն ամէն պատճառ :

Մ Ո Գ Պ Ե Տ

Քեզի ըսի Նազենիկ,
 Անքըննելի են երկիրք :

Զայրոյթով ներս կը մտնէ բըմաց պարը :

Գ Ր Մ Ո Ւ Հ Ի Ն Ե Ր

Բաւ է մոզպետ, անհուն բարի
 Ինչո՞ւ կ'ըլլաս Նազենիկին .
 Մենք լըսեցինք իր հայհոյանք .
 Որքան ըլլայ իշխանական,
 Օրիորդ քընքուշ, պէտք է պատժել
 Չի խընայել ազնիւ զարմին .
 Քանց ամէն զարմ մայր Անահիտ
 Ազնւագոյն է զիցուհին :
 Թէ Արտաւազդն է սիրելին,
 Չունի բաժին հետ մեր խըմբին,
 Ուխտազրուժ է, աստուածուրաց .
 Թող տարազիր մեկնի ի բաց,
 Երթայ զըսնէ կոյսեր հայոց
 Ու միասին լայ ու կոծէ
 Զիւր Արտաւազդ արքայն փըլած :
 Հերիք է մոզպետ,
 Հերիք է այսքան
 Բարեգութ ըլլալ .
 Տաճարիս մէջ սուրբ
 Լըսել անհամար
 Կոպիտ հայհոյանք :
 Ահա Արտաւազդ
 Պըղծեց մեր տաճար,
 Եւ հիմայ այս քած,
 Երկիրք ու աստուած

Կ'ուզէ նախատել,
Հողիներ խախտել:

Մ Ո Ք Պ Ե Տ

Պատիժ պատուհաս թող տան աստուածներ,
Երկընքին պատուէր մենք չենք կարող տալ:

Ն Ա Զ Ե Ն Ի Կ

Հողի արխեղծ
Սըտէ կեղծէ,
Յոյց տայ ինքզինք
Փայլել անկեղծ,
Դըրսէն փայլուն՝
Որքան կեղծէ,
Ներքին թաքուն
Հողին պըղծէ:

Ք Ր Մ Ո Ւ Հ Ի Ն Ե Ր

Լեզուդ խենէշ, ինչպէս հըրէշ
Տըղմէն հանես, երկինք մըրես,
Կոյսեր մըրկես, յոյսեր լըղես:

Ն Ա Զ Ե Ն Ի Կ

Քրմուհիներ ի խոր խոցուած ու խրոսկած
Կը տեսնուէք: Մի՛ վըրդովիք. չունիմ ձեռ-
(քեր

Կայծ ու կրակ, որ պատըռանմ' ձեր սըր-
(տին քող,
Յոյց տամ ամէն ձեր բարդ ի բարդ ճի-
(ւազութիւն:
Էս ձեզի հետ չունիմ ինդիր
Աստուածներէն է իմ պահանջ:

Ք Ր Մ Ո Ւ Հ Ի Ն Ե Ր

Դեռ կը տոկաս,
Կը յամառիս,
Կը նախատես ...:
Մայր Անահիտ
Անպատուհաս
Ինչո՞ւ թողուս,
Ինչո՞ւ գըթաս.
Սաստէ՛ ով մայր
Չեռքէդ թափէ
Կայծեր տաղող,
Տաղէ փակէ
Այս պիղծ բերան:

Ն Ա Զ Ե Ն Ի Կ

Կեղծիք ամէն, խենէշ արատ, վատութիւն
Բոյն են զըրեր ձեր կըրծքի մէջ: Պաշտօնեայ
Էք կեղծիքի, պատրող սըտող նենգաւոր:

Չեր վարք ու բարք, ամենօրեայ զարաններ,
 Լըկտի գործերն ինձ յայսնի են, ոչ ան-
 (ծանօթ.

Վիշապներ էք քինախընդիր, մոլեռանդք.
 Կուռք փառատենչք, շարք նախանձորդք
 (վատողիք:

Կրօնքի պես էք, բայց անկըրօն: Կը կեղծէք
 կեղծ սըրբութիւն, անբըծութիւն պըժդալի.
 Եւ ժողովուրդ՝ անփորձ տըզէտ շըւարած,
 Աստուածներէն խնդրէ հայցէ կրօնքի կայծ.

Ամպերէն մէկ ամպրոտածին՝

Աստուածապես թէ կայ իշխէ

Յոյց տայ իր զօր, շանթ ահաւոր:

Քուրմերու խումբը կատաղած, Նազենիկի մազերէն
 քաշելով կը տանին բոցավառ ատրուշանին քով. ա-
 ոանց մոզպետի հրամանին սպասելու, կուզեն Նազե-
 նիկը կրակի մէջ ողջակիղել: Բայց Մոզպետը կը գոչէ.

Մ Ո Ք Պ Ե Տ

Ես եմ իշխան, պատգամատու
 Մեհնեական սուրբ ախումբին:
 Թողէք ազատ այդ հայհոյիչ
 Ես կը լուծեմ անոր վըճիւ.
 Երկնից պատգամ շուտով հասնի:
 Քանց մեր ախումբ՝ զիք զեցուհիք
 Վըճխընդիր են իրենց փառաց:

Տեսէք սէրն այն սիրականին
 Որքան կոյր է սէրըն մուլի,
 Մուրցընէ ու մոռցընէ
 Հաւատք երկինք ու սրբութիւն.
 Մարդը զինէ երկինքի զէմ
 Աստուածալախ երկիւղ ու սաստ
 Խըլէ սըրտէն, և փոխարէն
 Կեանքը կիզող բոցը վառէ.
 Մարմին զիակ կու գարձընէ:

Մեհեանին ետեւէն կը լսուի կոչնակի մը ձայն. եր-
 կու ուժգին հարուած ամբողջ քրմականներու ուշագրու-
 թիւնը կը խէ: Ամէնքը հասկընալով հարուածներուն
 նշանը կը գոչեն:

Ք Ր Մ Ա Կ Ա Ն Ք

Կոչնակ հնչէ,
 Տայ աւետիս
 Հասաւ գուժկան:

Պատուած զգետներով հողիւ մը ահապարելով շըն-
 շասպառ կը մտնէ քրմական խումբին մէջ:

Գ Ո Ի Ժ Կ Ա Ն

Գուժկան եմ,
 Կը գուժեմ:

Ք Ր Մ Ա Կ Ա Ն Ք

Այլ՛ . . .

Գ Ո Ւ Ժ Կ Ա Ն

Գուժեմ՛ գոյժ ահաւոր:

Ք Ր Մ Ա Կ Ա Ն Ք

Փութա՛

Գութկան,

Կահան

Ողբ լաց

Ունի՛ս

Բերած:

Գ Ո Ւ Ժ Կ Ա Ն

Թող սուգ բընէ՛

Հայոց աշխարհ.

Հայոց բանակ

Բընէ՛ մեծ սուգ:

Ճերմակ գօտի,

Ճերմակ ըզգեստ

Ճերմակ հագնի,

Ամէն հայ փառք.

Բերդեր բանան

Ճերմակ զբրօշ,
Ճերմակ ջորի
Լըծուած կառքին,
Երթան բերեն
Եթէ՛ զբանեն
Արտաշատէն
Անգին կորուստ
Հայոց թագին:

Ք Ր Մ Ա Կ Ա Ն Ք

Պատմէ՛ մեկին, պայծառ յստակ,
Ինչ որ գիտես գութկան հրեշտակ:

Մ Ո Գ Պ Ե Տ

Աստուածներ, միշտ օրհնած
Ըլլայ՛ ձեր սառտ, պատիժ, հարուած:
Հայոց մեհեանք, տաճարականք
Արքունականք և լեռնականք
Հայոց սարեր
Առուակ գետեր,
Ծառ, ծաղիկներ,
Թռչնիկ ձրկնիկ,
Ամէն հայ շունչ,
Կ'օրհնէ՛ ձեր կամք
Ըլլայ՛ բարի,
Կամ սրգալի:

Գ Ր Մ Ա Կ Ա Ն Ք

Երգէ մեհեան թըմբկի դափխնք,
 Երկնից հասցուր օրհնեղ բոմբխնք:
 Երգենք երկնից ամէն աստուած
 Անահայ կամք լինի օրհնած:
 Յառաջ գուժկան
 Վարէ քո բան,
 Լըսենք օրհնենք,
 Երկնից օրէնք:

Գ Ո Ւ Ժ Կ Ա Ն

Պահ մը առաջ, մինչդեռ պարէր
 Ձեր սուրբ ախումբ. մինչդեռ լըսուէր
 Մեհեանական սըրինդ ծընծղայ,
 Սարին վերէն որոշ տեսայ,
 Շատ ըստուերներ որ ման գալով
 Տաճարին շուրջ փըչէին հով.
 Հովը խիտ ամպ, սեւցած ամպեր
 Չեացընէր, ամպ բըբաբեր
 Ճիւաղ, հըրէշ՝ բազմատեսակ
 Ամպերէն գուրս կազմած պըսակ,
 Շատ զանազան կ'աննէին ձեւ.
 Երբեմըն կոշտ, կամ բարեձեւ,
 Կամ ողիներ շող խառուտիկ
 Չեանային հըրեշտակ փոքրիկ:

Գ Ր Մ Ա Կ Ա Ն Ք

Նըշան երկնային
 Աստուածք կու տային.
 Մեր ամէն հայցուածք
 Լըսէին աստուածք:

Գ Ո Ւ Ժ Կ Ա Ն

Երբ մեր արքայն, բաջն Արտաւազդ,
 Քովէս անցաւ, յազատն ի վեր,
 Ի վեր Մասիս, թըռաւ ճախրեց
 Այն տեսիլներ ամպ, ողիներ
 Ի միասին գէպ ի արքայն
 Գացին հասան զինք զըրկեցին:

Գ Ո Ւ Բ Մ Ե Ր

Փառք Աստուածներուն...

Գ Ո Ւ Ժ Կ Ա Ն

Ամպերուն մէջէն ճիւաղներ չեղան,
 Այլ սիրուն, նազուկ, ճերմակ ողեակներ,
 Կոյսերու խումբեր, որ պարով երգով
 Դէպ ի Արտաշատ յերասիս Մեծամօր
 Զարքայն մեր որսորդ, զարին Արտաւազդ
 Թըրցուցին տարին, մօտ Գինայ ակին:

Կինձ, իշախայրի՝ տեսաւ Արտաւազդ,
 Սիրոյ ոգիներ իրեն որսակից
 Եղան խայտալով. Երասի կարմրեցաւ
 Որսական արեամբ. ցընձաց Արտաւազդ
 Իր պարով որսով, կամուրջէն վազեց,
 Տեսաւ գետին մէջ որսեր գեղամի
 Դէմքով հարսնագեղ, մէջքով ձըկնային.
 Մոլեղին խանդով հարաւ արբեցաւ.
 Իրեն որսակից ոգիներ սիրուն՝
 Կերպարանք առին ձիւաղ քաջերու.
 Խըրտեցաւ իր ձին, և գետին անդունդ
 Տարաւ զԱրտաւազդ և որսորդ շքներ:
 Չըկներ կուսագէժ փոխուեցան հըրէշ,
 Մասեաց փորին մէջ ուր վառի զըժոխք
 Հնն տարին զըրին, շըղթայի զարկին
 Բանտեցին զարքայն, թաղեցին պըսակ
 Փառք ու գաւազան, պետն արարատեան:

Քրմական խումբը անպատում ուրախութեամբ կը սկսի երաժշտական գործիները հնչեցնել. ատուշանին մէջ խունկը ափերով կը նետեն ու ամէնքը գետնամած, կը սկսին օրհնութեան երգը: Նազենիկ դալկահար իր վերջին նուազկոտ խօսքն կը հնչեցնէ:

Ն Ա. Զ. Ե. Ն. Ի. Կ

Վրէժ երկընքին...

Կու գամ քեզ անդին,


Այլ չեմ մընար աստ
 Սէր իմ Արտաւազդ:

Նազենիկ թեւին երակը կը խածնէ, արեւնը կը վազէ անշնչացած կը փռուի գետին:

Ք Ր Մ Ա Կ Ա Ն Ք

Փառք Աստուածներուն
 Նըւազէ տաճար,
 Մօր Անահտայ փառք
 Հնչենք յաղթական:
 Լուծեց վրէժ երկին,
 Թող զիտնայ աշխարհ,
 Ամէն մարդ հըրօր,
 Ամէն թագաւոր,
 Ամէն բընոււոր.
 Աըղարուժեան աչք
 Վիբէն կը զիտէ,
 Կըրէ, համբերէ
 Բայց ամենուին
 Չի մոռնար բընաւ
 Իր շանթն ահաւոր,
 Կը նետէ վերէն,
 Կը խոնարհին թագբ
 Կ'անցնին ամէն փառք:





Հայաստանի Ազգային գրադարան



NL0429992

28713